

Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՆԱԽԱԳԱՀՆՅ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Շաբաթ, Հոկտ. 1-ին, ներկայեան ժամը 8.30-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրպէրեան, որպէս Պապոսյ հիւր նախագահեց Պոլսահայ Միութեան Հիմնարկութեան 27-րդ փարենդարձի ճաշկերոյթին, Կլէմպէյի Պրէմի Վիու Քոլեջըն սրահը: Ներկայ էր նաեւ բաղաքս հիւրաբար գտնուող Հայաստանի Արմաիքի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիոն եպս. Աղամեան:

Բարեխնամ առաջնորդ Սրբազան Հայրը Տիար Սիմոն Աճիլաջօղլուի և Տոթթ. Մարք Զէօշկէրի առաջնորդութեամբ, իւրաքանչիւր պոլսահայու հետ մօտէն ծանօթանալու համար, առանձին-առանձին այցելեց 28 սեղանները և գնահատեց անոնց՝ Հայ Եկեղեցւոյ փաճած նուիրեալ ծառայութիւնը:

Պոլսահայ Միութեան արևնապետ Տիար Սիմոն Աճիլաջօղլու բարի գալուստ մաղթեց զոյգ Սրբազաններուն, բոլոր ներկաներուն և ըսաւ. «Արեւմտեան թեմէն ներս, շնորհիւ առաջնորդ Սրբազան Հօր փայլուն, առողջ և թարմ ծրագիրներուն, հայ համայնքը պիտի ապրի իր զարթօնքի օրերը»: Այնուհետեւ Պրն Աճիլաջօղլու Վարչութեան խօսքը կարդալէ ետք բեմ հրաւիրեց առաջնորդ Սրբազանը:

Գերշ. Սրբազան Հայրը նախ ներկայացուց Արմաիքի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիոն Սրբազանը, շնորհաւորեց ներկաները, իր գոհունակութիւնը յայտնեց Պոլսահայ մեծ ընտանիքին հետ ըլլալու առիթով և ըսաւ. «Մարդ է որ գործէ զերկիր». մարդն է, որ նրկիրը կը կառուցէ: Դուք էք որ ձեր ընտանիքներով կառուցած էք այս ընտանիքը և ձեր զաւակներուն կը ներշնչէք հայու ոգին, սէրը մշակոյթին և Եկեղեցիին հանդէպ: Ես կ'ուզեմ այս առիթով որպէս Եկեղեցիի սպասաւոր շնորհակալութիւնս յայտնել ձեզի և բոլոր անոնց, որոնք հիմնած են Պոլսահայ Միութիւնը և 27 փարիներ շարունակ յամառ աշխատանքով պահած-պահպանած՝ այս ընտանիքը, որպէսզի անկա շարունակէ մնալ աղբիւրը հոգեւոր սնունդի և ազգային դաստիարակութեան:

Սրբազան Հայրը անգլերէնով ալ խօսելէ ետք, յաջողութիւն մաղթեց Միութեան Վարչութեան և յարակից բոլոր յանձնախումբերուն, իրենց ապագայ ծրագիրներուն համար: